«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը նշել որպես հանրային ծառայողի օր:
2. ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 12-ի «ՀՀ-ում ոստիկանության օրը նշելու մասին» թիվ 1215, 2002 թվականի փետրվարի 21-ի «ՀՀ-ում ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրը նշելու մասին» թիվ 162, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «ՀՀ-ում քննչական կոմիտեի ծառայողի օրը նշելու մասին» թիվ 1087-Ն, 2013 թվականի ապրիլի 25-ի «ՀՀ-ում հարկադիր կատարողի օրը նշելու մասին» թիվ 410-Ն, 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «ՀՀ-ում քրեակատարողական ծառայողի օրը նշելու մասին» թիվ 1090-Ն, 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «ՀՀ-ում արտակարգ իրավիճակների աշխատողի օրը նշելու մասին» թիվ 1008-Ն, 2003 թվականի մարտի 7-ի «ՀՀ-ում դատախազության աշխատողի օրը նշելու մասին» թիվ 207-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչել:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: